

Դ. ՄԱՄԻՆ-ԱՒԹԵՐՅԱԿ

ԿԱՐԵ Ի, ՎԱՐՍԱՎԻ ՁԻԼԱՅԻ
ՅԵ + ԳՈՐԾ ԿԱՏՎԻՇ ՄՈՒՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ



891-716
Մ-22

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

30 MAY 2011

Դ. ՄԱՍԻՆ - ՄԻՔԻՐՅԱԿ

5-22

Ug

ԿԱԹԻ, ՎԱՐՍԱԿԻ ՇԻԼԱՅԻ

3 t 4

ԳՈՐԾ ԿԱՏՎԻ ՄՈՒՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ

3 9 2 6
100%
33/29

ԴԱՊԻԿԸ ՅԵՎ ՆԿԱՐՆԵՐԸ

ՅԵ. ԿՐՈՒԳԼԻԿՈՎԱՅԻ




ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1934

24.06.2013

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Գասպարյան
Թուսերենից փոխադրեց՝ Զավախնեցի
Լեզվական խմբագիր՝ Ա. Առաքամյան
Մրբագրիչ՝ Դար. Հակոբյան



ԿԱԹԻ, ՎԱՐՍԱԿԻ ՇԻԼԱՅԻ ՅԵՎ ԳՈՐԾ ԿԱՏՎԻ՝
ՄՈՒՐԿԱՅԻ ՄԱՍԻՆ

I

Ի՞նչ ուզում եք ասեք. բայց դա զարմանալի բան եր. իսկ ամենազարմանալին այն եր, վոր դա կրկնվում եր ամեն որ. Հենց վոր կաթր կոթավոր թափայով ու վարսակի շիլան կավե կճուճով դնում եյին ոջախին, իսկույն սկսվում եր. Սկզբում յուռ են, հանգիստ ու խաղաղ, կարծես թե՝ վոչինչ, բայց մի քիչ ճետո սկսվում ե խոսակցությունը:

— Յես կաթն եմ...

Գլավլիս 8646, հրատ. 3079, պատ. 1183, տիրաժ. 5000.
Հանձնված ե արտադրության 22 հուլիսի 1934 թ.
Ստորագրված ե տպելու 20 սեպտեմբերի 1934 թ.
Պետհրատի տպարան, Եերևան.

— Իսկ յես՝ վարսակի շիլան...

Սկզբում հանգիւտ, խաղաղ են խոսում,
կամաց փսխում, իսկ հետո՝ քիչ-քիչ տա-
քանում — հուզվում:

— Յես կաթն եմ...

— Իսկ յես՝ վարսակի շիլան...

Շիլան ծածկում եյին կավե մեծ խու-
փով, բայց նա կճճում դարձյալ մըրթ-
մըրթում եր պառավ կնկա պես: Իսկ յերբ
սկսում եր բարկանար, կատաղել բշտիկ-
ներ եր բաց թողնում, տրաքում ու այս-
պես խոսում.

— Ի՞նչ ել վոր անեք, սակայն յես
դարձյալ շիլան եմ, շիլան, վարսակի շի-
լան ... փըթթ...

Կաթին այդ թվում եր խիստ վիրավո-
րական:

— Ասացեք խնդրեմ, չեղած-չլսված մէ
բան ե կարծես, — ինչ վոր վարսակի շիլան...

Ու կաթն սկսեց տաքանալ հուզվել,
փրփուր արձակել ու ջանք-ճիղ թափեր
վոր իր ամանից դուրս գա ու թափվի:
Բավական եր, վոր տանտիկինն ուշքն ու-
րիշ կողմ դարձներ — կաթն իսկույն կբարձ-
րանար, կթափվեր:

— Ա՛յս ես գիտ կաթը, իմ ես գիտ կա-
թը... — գանգատվում եր միշտ խեղճ տան-
տիկինը, — հենց վոր մի ըսպե չնայես —
չնակես՝ իսկույն կթափի:

— Ե՛, յես ինչ անեմ, վոր յես այդպես
բարկացկոտ եմ, դյուրագրգիռ, — արդա-
րանում եր կաթը: Ինքս ել ուրախ չեմ,
վոր բարկանում եմ: Իսկ եղ շիլան ել
մյուս կողմից ե հենց ականջիս տակ պար-
ձենում, փչփում, — յես շիլան եմ, շիլան,



շիլան եմ, շիլան... նստել ե ամանում ու
մըրթմըրթում ե: Յես ել ինչ անեմ, զե,
բարկանում եմ:

Յերբեմն բանը հասնում եր այնտեղ,
վոր են շիլան ել եր թափում կճճից,
չնայած բերնի կավե մեծ խուփին, — սո-
զում եր, սողում ու թափփում, հետն ել
շարունակ կրկնում.

— Իսկ յես շիլան եմ, շիլան եմ, շիլան...
թշշ...

Ճիշտ ե՛ հաճախ չեր այսպես պատա-
հում, բայց պատահում եր, և իսեղմ տան-
տիկինն ամեն անգամ հուսահատ կրկր-
նում եր.

— Ա՛խ ես իմ շիլան. ի՞նչ ե ուզում, վոր
չի կարողանում հանգիստ, սուս նստել իր
ամանում. զարմանք բան ե, ուզզակի
զարմանք...

II

Խեղմ տանտիկինն առհասարակ շատ
հաճախ եր վրդովվում: Հենց մենակ են
փիսիկ Մուրկան ինչքան եր բարկացնում
խեղմին... Ինքը տգեղ ու անձոռնի, բայց
ինչ կանես, վոր տանտիկինը շատ եր սի-
րում եղ կատվին: Հենց ամեն որ առա-
փոտից եղ մեր Մուրկան գնում եր նըա
յետելց ու ենպես ի խեղմ, ու աղիողորմ



մլավում, վոր քար սիրտն ել չեր դի-
մանա:

— Եսպես ել մի անկշտում ու ծակ
աչք կլինի... զարմանում եր տանտիկինն
ու քշում կատվին: Հենց յերեկ ինչքան
լյարդ կերար մենակ:

— Բայց դա յերեկ եր, — իր հերթին
զարմանում եր Մուրկան: — Այսոր ախր
զարձյալ ուզում եմ ուտել... միանւ...
միանւ...ու...

— Ուտել կուզես՝ մուկ բռնիր կեր,
թամբակ փիսո:

— Հա, ասելը հեշտ ե, ինարկե, ապա
մի ինքդ փորձիր բռնել թեկուզմի մուկ, —
արդարանում եր Մուրկան: — Կարծեմ
յես շատ եմ աշխատում... որինակ՝ հենց
անցյալ շաբթին չեր, վոր բռնեցի մի
մկնիկ: Վորտեղից ե բաս ես քթիս ճանկ-
ռածը: Քիչ եր մնում ենպիսի մեծ մուկ
բռնեյի... Բայց ինչ կանես, անպիտանն
ինքը բռնեց իմ քթից... ախր մենակ
ասելն ե հեշտ՝ մուկ բռնի:

Լյարդն ուտելուց հետո Մուրկան հան-
գիստ բազմում եր ոջախին մոտիկ մի



տաք տեղ, աչքը փակում ու մրափում
քաղցր ու անուշ:

Հը, տեսնում ես, ելի ինչքան և
տոպել, — զարմանում եր տանտիկինք:

Աչքերն ել պինդ փակել ե, թամ-
բալ Մուրկար Սրան հենց տուր, միս տուր,
հա տուր...

Կուշտ ուտելուց հետո, Մուրկան սի-
րում եր զբաղվել նաև կողմնակի բանով,
հենց ենպես, իրա հաճույքի համար: Ինչու,
որինակ, մի յերկու ժամով շնատել պա-
տուհանում, ուր կախված ե դեղձանիկի
վանդակը, մեջն ել՝ սիրուն թռչնակը:
Շատ գուրեկան ե նայել, թե ինչպես ե
են հիմարը թռչկոտում:

— Յես քեզ զիտեմ, ճանաշում եմ,
հին խարեբա, — կանչում ե դեղձանիկը
վերսից. — շատ իգուր ես նայում եղան
ինձ վրա...

— Իսկ յեթե կամ ենում եմ ծանոթա-
նալ յես քեզ հետ...

— Գիտեմ յես քո ծանոթանալը: Ո՞վ
եր հենց ես մոտ որերս վողչ-վողջ կերակ
ինեղձ ծիտիկին... Հա, զզվելի:

— Իսկի ել զզվելի չեմ, մինչև ան-



զամ հակառակը — ինձ ամենքը սիրում
են:

Արի ինձ մոտ, տես ինչ հեքյաթ
կպատմեմ քեզ:

— Այս խաբեբա... ինչ խոսք, վոր գու
լավ պատմող ես, հեքյաթ ասող... Յես տե-
սա, թե ինչպես եյիր հեքյաթ ասում տա-
պակած ճուտին, վոր գողացել եյիր խո-
հանոցից... շատ լավն ես, հա...

— Ե՞ս, դու զիտես, յես քեզ համար եմ
ասում: Իսկ ինչ վերաբերում ե տապա-
կած ճուտին, այն, ճիշտ ե, յես կերա-
Բայց չե ախր միևնույն ե, նա ել վոչ
մի բանի պետք չեր:

III

Ի միջի այլոց, Մուրկան ամեն որ
առավոտները նստում եր վառած, տաք
ոջախի կողք ու համբերությամբ
ականջ դնում, թե ինչպես կաթն ու շի-
լան կովում են:

Խեղճը վոչ մի կերպ չեր կարողանում
հասկանալ, թե ինչ բան ե, ու մենակ
աչքերն եր ճպճպացում:



— Յես կաթն եմ:


— Յես՝ շիլան, շիլան, շիլան, շիլի...

— Զե, չեմ հասկանում: Իսկի վոչինչչեմ հասկանում,—ասում եր Մուրկան: Այսր ինչո՞ւ յեն եղաքես բարկանում: Ասենք թե հենց յես շարունակ կրկնեմ՝ յես կատուն եմ, յես կատուն եմ, յես կատուն, կատուն, կատուն... մի՞թե դա վիրավորական կլինի վորեե մեկի համար: Զե, չեմ հասկանում... սակայն պիտի խոստովանեմ, վոր յես կաթն առանձնապես սիրում եմ այն ժամանակ, յերբ նա չի բարկանում:

Այդ միջոցին կաթն ու շիլան ինչ վոր շատ տաք, կատաղած եյին կովում. կովեցին այն աստիճան, վոր կիսով չափ թափվեցին ցած, ո՞ջախի վըա, ու խիստ անդուր հոտն ընկավ տունը: Տանտիկինը վազեց, բայց ի՞նչ աներ. խեղճը ծնկները թակեց:

Ե՛, ի՞նչ անեմ յես հիմա, — գանգատվեց նա կաթն ու շիլան յետ քաշելով ո՞ջախից: — Զես կարող թե մի բոպե աշքդ հեռացնես:

Կաթն ու շիլան այդպես թողած, տան-



տիկինը գնաց շուկա՝ մթերք առնելու։
Մուռկան իսկույն ոզտվեց եղ հանգաման-
քից։ Նա նստեց կաթի կողքին, կամաց
փչեց ու ասաց։

— Խնդրում եմ, մի բարկանա, իմ
կաթիկ։

Կաթն սկսեց կամաց-կամաց հանգը-
տանալ։

Մուռկան շրջեց կաթի չորս բոլորը,
մեկ անգամ ել փչեց, բեխերն ուղղեց ու
փսփսաց շատ քնքուշ։

— Դե, ինձ լսիր, ինչ եմ ասում...
կովելն առհասարակ լավ բան չե։ Այս
Յեկեք ինձ դատավոր ընտրեցեք, և յես
իսկույն կքննեմ ձեր գործը...»

Ծերպում նստած սև բլոճն անգամ
ծիծաղից մեռավ...

— «Այ քեզ դատավոր... հա, հա... հա...
ախ հին խաբերա, և ինչեր ասես, վոր չի
հնարում...»

Բայց կաթն ու շիլան շատ ուրախ
եյին, վոր իրենց վեճը վերջապես մեկը
պիտի քննի։ Բայց իրենք անգամ չկարո-
ղացան պատմել ու պարզել, թե բան
ինչ եր, ինչի համար եր, վոր նրանք
այդպես տաք վիճում եյին։

— Լավ, լավ, վոչինչ, ինքս կքննեմ
ամեն ինչ մեկ-մեկ, — ասաց են Մուռկան,
— Յեվ հոգուս յերբեք յես մեղք չեմ
անի... դեհ, սկսենք կաթից։

Մի քանի անգամ նա պտույտ յեկավ
կաթի բոլորքը, վերեկից փչեց, թաթով
փորձեց ու սկսեց լակել.

— Ո՞, հասեք, ոգնեցեք, — կանչեց
բլոճը — նա հիմա վողջ կաթը կխմի,
և կկարծեն, թե յես եմ արել այդ։

Յերբ տանտիկինը դարձավ շուկայից,
ու նայեց կաթին, — կճուճը մաքուր գա-
տարկ եր։ Իսկ Մուռկա կատուն ոջախի
կողքին քաղցը քնել եր։ Կարծես թե իս-
կի բանից տեղյակ չեր։

— Այս զու, անպիտան, — կատվի ա-
կանջից բռնած քաշելով, հանդիմանում
եր խեղճ խոհաբարուհին, — դե ասա, ասա,
նվ խմեց կաթը։

Վորքան ել ցավում եր կատվի ական-
ջը, բայց նա ձևացնում եր, թե ինքն
իսկի բան չի հասկանում։

Յերբ տանտիկինը նրան գռնից գուրս
շպրտեց, նա թափ տվեց իրեն, լիզեց գըգ-
գըգված մազերը, ուղղեց կեռ պոչն ու
այսպես խոսեց։

— Յեթե յես տանտիկին լինեցի, ապա
կատուների գործն այն կլիներ, վոր առա-
վոտից մինչև իրիկուն հենց կաթ կիր-
մեյին։ Բայց մեր տանտիկնոջից յես չեմ
նեղանում, քանի վոր խեղճն այդ չի հաս-
կանում։



ՀՀ Ազգային գրադարան



NL0391305

3974

ԳԻՆԸ 30 ԿԴ.



Ա. Խաչիկ-Սիբորյան

Օ յօլօշէ, օչանա և օօրօն պէտինկ Մուրկէ

Գո 607 Երևան, Հայաստան, 1985